ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 22-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՎԱՀԱՆԻ ՎԱՆԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԻՐ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ(ՕԳՆԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթներով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Թումանյանի համայնքապետարանի <<Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի>> 2019թ.հունիսի 21-ի նիստի որոշումը և Թումանյան քաղաքի բնակչուհի Հայկանուշ Վահանի Վանեսյանի դիմումը՝
որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի բնակչուհի Հայկանուշ Վահանի Վանեսյանի խնդրանքով,որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները, իր համաձայնությամբ նրա նկատմամբ Ռիմա Հրաչիկի Մկրտումանին նշանակել պատրոն (օգնական):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 23-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ)ենթակետով և հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկ.2283490 հաստ.24.06.2008թ. և քաղաքացի Գագիկ Հմայակի Պետրոսյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Քաղաքացի Գագիկ Հմայակի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի Լորուտ գյուղի մաքրման կայանը (ծածկագիր 06-045-172-000005-001) մակերեսի չափը՝ 276,0 քմ և կառուցման սպասարկման 0,0676 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ , Թումանյան համայնք,գյուղ Լորուտ,Ճալա կոչվող տարածք,շ.5:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ